


This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·



ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՎԱԶԵԱՆԻ
Կարգաթիւ 57

[illegible]

[illegible]

[illegible]

ԳԻՐՔ ՀԱԿԻՐՃ

ՎԱՍՆ ՃԱՌԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀԻ

—⊱⊰ ⊱⊰—

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲԵՂԱՅ

ՋՈՒՂԱՅԵՑԻ


Patmutiwn Parsits

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲԵՂԱՅԻ

ՋՈՒՂԱՅԵՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ

(ԺԸ. դար)



ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

ԲԱՐԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՂԱՒԵԼԵԱՆՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
1905

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

առանց Ջուղայի հզօր աջակցութեան եւ խրախուսանքի»։ [1]) Ահա եւ այս Ամենափրկիչ վանքի միաբանութեան համեստ եւ արդիւնաւոր գործիչներից մէկն է Խաչատուր աբեղայ Իսահակեանը։

* *
*

Խաչատուրը, ինչպէս ինքն է ասում, ծնուել է Ասպահանի Նոր-Ջուղայ քաղաքում, սնուել եւ զարգացել է Ս. Փրկչի «Հրաշակերտ» վանքում։ [2]) Նորա ծննդեան եւ մահուան ստոյգ թուականները յայտնի չեն ոչ իւր պատմութիւնից եւ ոչ ժամանակակից պատմագիրներից։ Միայն յայտնի է, որ ապրել է 18-րդ դարում Ղուկաս կաթուղիկոսի հայրապետութեան եւ Տէր Յակոբ արքեպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ, [3]) եւ վախճանուել է Բասրայում, ուր գնացել էր Ամենափրկիչ վանքի միաբանութեան կողմից իբրեւ նուիրակ եւ այնտեղից էլ պիտի գնար Հնդկաստան։ [4])

* *
*

Ջուղայեցին առանձին մեծ ուսում չէ ստացել՝ ինչպէս եւ ինքն է տեղեկութիւն տալիս իւր պատմութեան 4-րդ երեսում. «Զի ոչ էի ես տրուպ թշուառագոյն վատաբաղդս կրթեալ եւ հրահանգեալ ի յիմաստս համալսարանի քերթողաց. եւ ոչ ի ճեմարանս վսեմագոյն իսկ հզօր սափեստացէի արդեօք բնաւ մարզեալ»։ Նոյնպէս եւ երկրորդ էջում գրում է. «Ոչ վայել էր ինձ իրակել գայսպիսի իր, այլ այնոցիկ էր ճահ եւ ըմբռն, որք կրթեալք իցեն եւ մարզեալք համալսարանոց զքերթողութիւն, զճարտասանութիւն, զտրամաբանութիւն, եւ զայլ արհեստս աղատականս։»

---

1) Հայկական տպագրութիւն Հատոր Ա. 1904. էջ 177.
2) Տես երես 11։
3) Ղուկաս կաթ. 1780—1799. իսկ Յակոբ արքեպիս. առաջնորդ. 1788—1791։
4) Ազդարար լրագիր 1795 թ. № 5-րդ. էջ 1.

Նա պատմութիւնը գրում է իւր «ընկերակից» համաքաղաքացի Յարութիւն Խաճակեանի խնդրանօք․ որին գրքի յառաջաբանում նուիրում է հետեւեալ խօսքերը․ «Դու միայն բաղձալի․ ի յորոց երեւեցար վեհագոյն․ որ սիրես զիմաստութիւն․ եւ ցանկաս զայնոսիկ իրս պատկանաւորս ի մատենի աստուծոյ պարունակել ի յօգուտ բանասիրաց․ եւ ի պայծառութիւն ազգիս Հայկազեան»,[1]) Այս «Յարութիւն Սաճակեան էր Ջուղայեցի ծնեալ ի Բասրայ․ եւ ըստ գիտութեան մասին համբաւաւոր որ․ որ վախճանեցաւ ի Բումբայի․ Թողլով զկնի իւր զյիշատակութիւնս արժանի եւ ոտանաւոր գործոց․»[2])

Նոր-Ջուղայի պատմութեան հեղինակ պարոն Յարութիւն Տէր-Յովհաննեանցը․ որն եղել է Ամենափրկիչ վանքի առեւագպրին՝ իւր պատմութեան յառաջաբանում յիշատակում է հետեւեալը․ «Հայր Միքայէլ վարդապետն Չամչեան յամի 1787 ի 15 Յունվարի գրէ զԹուղԹ առ գիտնական պարոն Յարութիւն Սաճակեան Աղանուրեանց, խնդրելով ի նմանէ առաքել առ ինքն զանուանս Թագաւորացն Պարսից հանդերձ ժամանակագրական ծանօԹուԹեամբ նոցին զահակալուԹեանցն․»

Պարզ է ուրեմն՝ որ Յարութիւն Սաճակեանը․ յարգելով հայր Չամչեանի խնդիրը․ իւր կողմից խնդրել է այդ գործի համար ծանօթաս իւր բարեկամ Խաչատուր աբեղային՝ գրել հայր Չամչեանի խնդրած պատմութիւնը․ Եւ իսկապէս Խաչատուր Ջուղայեցին ոչ Թէ գրում է պատմութիւն․ այլ մի ժամանակագրութիւն․ ինչպէս եւ ինքն է ասում․ «Այլ ոչ ապաքէն զգործս եւ զարութիւնս նոցա ուրոյն վիպելով․ զորոց որք նախ քան զմեզ էին․ գեղեցիկ եւ սեԹեւեԹեալ ոճով գրեցին․ այլ եւ եԹ միայն զանուանս նոցա յիշատակելով․ եւ եԹէ արդեօք մարդ ինչ իցէ՝ եւ զԹիւս ամաց Թագաւորելոյն նոցա․ այսինքն՝

---

1) Էջ 1․
2) Պատմութիւն Նոր-Ջուղայի Ա․ Հատոր 1880․ էջ 4․

Ինչպէս երեւում է՝ Աղդարարի մէջ տպագրուած պատմութիւնն եղել է խսկական ձեռագիր բնագրից. որովհետեւ այդ մասին խմբագրութիւնը յիշատակում է հետեւեալը.

«Եւ որովհետեւ լսեմք զի զայն գրեցեալ գիրքն բերէր ընդ իւր առ ի տպագրել աստ. եւ զի յետ վախճանի նորա **եկն ի ձեռս մեր ձեռագիրն այն** այսպէս յառաջադրեցաք տպագրելով զայն հաստուցանել փոխարէն ղժուարութեան նորա. եւ թէ արժան էր գիրքս առանձին մատեանս կազմել. այլ զհոլովութիւն ծախուցն եւ աղքատութիւն տպագրատանն ոչ խոստացաւ.» Իսկ մեր ձեռքի տակ եղած ձեռագիր օրինակը հաւանական է որ մայր ձեռագիրն է. որից արտատպել են Աղդարարում. որովհետեւ. ինչպէս ասացինք. բոլորովին նման են իրար եւ բացի այդ ձեռագրից ոչ մի տեղ մի այլ ձեռագիր օրինակ չկայ. եւ երկրորդ. ինչպէս իմացանք Աղդարարի խմբագրութեան խօսքերից՝ Խաչատուր արեղան հետն առած իւր պատմութեան ձեռագիրը՝ գնացել է Բասրայ. իսկ այնտեղից էլ պիտի գնար Հնդկաստան իբրեւ նուիրակ. միեւնոյն ժամանակ եւ մտադրութիւն ունենալով տպագրել տալ իւր գիրքը Մադրասում. բայց վախճանուելով Բասրայում. Աղդարարի խմբագրութիւնը նորա մահից քիչ յետոյ ձեռք է բերում ձեռագիրը եւ տպագրում թերթում. Այստեղից պարզ երեւում է՝ որ նախ քան տպագրութիւնը **միայն** պատմութեան բուն ձեռագիրն է եղել. իսկ տպագրութիւնից յետոյ **ոչ ոք հարկ չէր համարիլ** յանձն առնել արտագրութեան տաժանելի աշխատանքը եւ տալ այդ պատմութեան մի այլ ձեռագիր օրինակ. Ափսոս Մայր Աթոռի մատենադարանի ձեռագրերի ցուցակից յայտնի չէ. թէ ե՞րբ եւ որտեղից է բերուած մեր ունեցած Ջուղայեցու պատմութեան ձեռագիր օրինակը. որով կարելի կըլինէր աւելի ճիշտ եզրակացութեան հասնել.

***

Մատենագրական արժէքի տեսակէտից հարկ չհամարե-ցինք մի որ եւ է փոփոխութիւն անել մեր հրատարակութեան մէջ, այլ լոյս ենք ընծայել նոյնութեամբ, ամփոփոխ պահելով հեղինակի քերականական ձեւերը՝ նոյն իսկ յայտնի քերակա-նական սխալներ, կէտադրութիւնները եւ ուղղագրութիւնը, ինչպէս եւ յատուկ անունների, բանալով միայն սղագրու-թիւնները (պատիւ)։ Ընթերցողներին դիւրութիւն տալու համար մեր կողմից նախ դրել ենք ծանօթութիւններ, ճշտելով անուն-ները եւ թուականները նորագոյն աղբիւրներով, երկրորդ նորագոյն արժէքաւոր աղբիւրներից քաղել եւ դրել ենք վերջում Պարսից թագաւորների շարքը իրենց թուականներով, սկսած Կիւրոսից մինչեւ Քերիմ խան։ Նոյնպէս մեր կողմից դրել ենք նիւթերի, գլուխների եւ յատուկ անունների ցանկ։

* *
*

Խաչատուր արեղայ Ջուղայեցին 18-րդ դարու սակաւա-թիւ եւ անտիպ մատենագիրներից մէկն է, եւ նորա երկը մեր եւ Պարսից պատմութեան համար մի կարեւոր աղբիւր է։ Հրա-տարակութեանս թերութեան համար ընթերցողների ներողամտու-թիւնը խնդրելով, յուսով եմ՝ որ մեր այս հրատարակութիւնը, իբրեւ մի նոր մատենագիր՝ կունենայ իւր գնահատութիւնը բանասէրների կողմից։

БԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂԱՒԵԼԵԱՆՑ

10 Մայիսի 1905 թ.
ի ս. Էջմիածին

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

1. Geschichte des alten Persiens, von Ferdinand Justi, Berlin, 1879.
2. Geschichte Irans, von Gutschmid, Tübingen, 1888.
3. Grundriss der Iranischen Philologie, von Wilh. Geiger und Ernst Kuhn. Strassburg, 1900.
4. Dictionnaire universel d'histoire et de géographie Boullet M Paris, 1854.
5. Энциклопедическій словарь Брокгауза, томъ XXIII, вып. 45, С. Пет. 1898.
6. А. Мюллеръ, Исторія Ислама, томъ I и II. С. Пет. 1895.
7. Стэнли Лэнъ-Пуль, Мусульманскія династіи, переводъ съ англійскаго съ примѣчаніями и дополненіями В. Бартольда, С. Пет. 1899.
8. *Ղևոնդեայ վարդապետի, պատմութիւն Հայոց Բ. տպագրութիւն, հրատար. Կ. Եզեանի Պետեր. 1887։*
9. *Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն ի Հերակլն Ս. Պետերբուրգ 1879։*
10. *Մխիթարայ Անեցւոյ. սկիզբն նորագիւտ պատմութեան (Սեբէոսի հետ միասին կազմած) Ս. Պետերբուրգ 1879։*
11. *Հեթում պատմիչ թաթարաց, Վենետիկ 1842։*
12. *Թովմա Արծրունի Ս. Պետերբուրգ 1887։*
13. *Յովհաննու կաթ. պատմութիւն, Երուսաղէմ 1867։*
14. *Ժամանակագրութիւն Միխայէլ Ասորւոյ, Երուսաղէմ 1871։*

Գրակ — Էջ.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու լուսազգեաց և գերփառունակ ամենայն Հայոց կաթուղիկոսի։

Եւ ի յառաջնորդութեան Նորոյ Ջուղայի ամենահռչակ և հրաշակերտ վանացս Տէր Յակոբ գերամեծար և աստուածաբան րաբունապետի և երջանկազարդ արքեպիսկոպոսի, որում Տէր պարգևեսցէ ընդ երկայն աւուրս։

Յամի Տեառն ՌՉՁԷ=1787 և ի թուականութեանս Հայոց ՌՄԼԶ=1236 յամսեանն Օգոստոսի ԺԵ. յԱսպահան ի գեօղաքաղաքս ի Նոր-Ջուղայ։



Քաջաբանս՝ Ազնուատոհմ եւ իմաստնայեղց բանասիրիդ Պարոն Յարութեան Խաճակեան Ջուղայեցւոյ խնդալ:

Զանչոյլ Աստուածային շնորհաց լուսոյն՝ որ անդատին անկեցաւ ի բնութեանս մարդկայնոյ սեռից, զոր ոմանք չիջուցանեն՝ կամ նսեմացուցանեն խժդժական՝ կամ անագորոյն բարուք, բայց դու ո՛ անձկալի՝ զայն ի քեզ արծարծեալ պահեցեր, և պահես միշտ. որով և բորբոքեցար, և զիս նուաստս բռնադատեալ ի գործ դժոխատարս և լաբիւրինթոս սադրեցեր, որ արտօնութեամբ, և կամ գերազանցութեամբ յոյժ և յոյժ անդր անցեալ գերակայ իսկ է քան զկար՝ և զզօրութիւն մտաց իմոց։ Ուրեմն՝ բարձրադունից զօրութեանց արժանաւոր իսկ ես՝ որ գեղեցիկ մտածութեամբ խորհեցար անջինջ յիշատակ զայս քեզ թողուլ և վասն քոյանոցն ամենեցուն։ Քանզի մինչ կցորդակիցք՝ և հաւասարազուգք ժամանակորդք ընկերակիցք քո զբաղին հոգօք աշխարհականօք, և ստորանկեալ նուաճին ունայնութեամբ կենցաղոյս, սակայն դու միայն՝ բաղձալի, ի յորոց երևեցար վեհագոյն, որ սիրես զիմաստութիւն, և ցանկաս զայնոսիկ իբս պատկանաւորս ի մատենի ատտատին պարունակել ի յօգուտ բանասիրաց, և ի պայծառութիւն ազգիս Հայկազեան։ Նմին իրի և ես թշուառաբաստ զուարթ մտօք, և դիւրաբար փոյթ յանձին կալայ կրել

զայս տաժանութիւն սակս իմոյ նուաղելոյս, որ ոչ վայել էր ինձ իրակել զայսպիսի իր, այլ այնոցիկ էր ճահ և ըմբռն՝ որք կրթեալք իցեն և մարզեալք համալսարանոջ զքերթողութիւն, զճարտասանութիւն, զտրամաբանութիւն, և զայլ արհեստս ազատականս։

Այլ թէև ոչ իմաստութեամբ՝ և զգօնութեամբ (որ տարաղուրկ և նահանջեցեալ իսկ եմ արդեօք յորմէ բոլորովիմբ) բայց մղէ ջանացմամբ յուսամ զշնորհն Աստուծոյ, որ պարգևէ առատապէս ամենեցուն, և լցուցանէ զամենեսին քաղցրութեամբ կամօք իւրովք, և ոչ ումեք յուսով խնդրողաց երբէք նախատէ (Յակ. Կաթ. 1. 2)։ Նա իսկ ապաստան կալայ անձինս եղկելոյս զօգնատուն և զգերամաքուր սուրբ կոյսն Մարիամ Աստուածածին, որ յորժամ յիշեմ զփառաւորեալ անուն նորա, և կամ զմտաւ ածեմ զանբաւ բարեգթութիւն նորա, և զարժանահայց բարեխօսութիւնն որ առ ապիրատ ազգս մարդկան, գրեթէ՝ սարսռմն ի յիս բերէ, և սօսափեալ քամինին համայնք ոսկերք իմ տառապելոյս։ Վասն զի արդարև որով, և ի ձեռն նորա, և որոյ միջնորդութեամբ յար ի Տեառնէ ծաւալեալ աշխարհ տարածին զեղմունք և պարգեք Շնորհաց առ որս, որք յուսով, հաւատով, սիրով և արտասուալից հառաչանօք հայցեն զնմանէ։ Որովք և ես յուսամ (թէպէտ խոստովանեցայ կանխագոյն զշամանդաղ՝ և զմշտագոյն տեսութիւն մտացս իմոց). զի նաև ապաւինելով զնպաստաւորութիւն մաքուր աղօթից ձերոց՝ զիղձ տենչմանց քոց լցուցից, և զյառաջադրեալ գործս իմ թարց խմբք երկբայութեան հաւատամ իսկ ի յամբոկ և ի լրումն ածել։ Որով լիցի ինձ, և մեծիմ տարփալւոյս իմոյ զկոմյն խնդութիւն։ Իսկ եթէ ուրեք ուրեք վրիպեալ գտանիցիմ և ստգտեալ, աղաչեմ զի անբասիր արասցես զիս, և զբթով ներեսցես. զի ոչ եթէ կամաւ և գիտութեամբ, այլ

յակամայ՝ և ի տգիտութեան մտացս իմոց ներմուծեալս վարկցես։ Այլ զոր ինչ ուղիղ և հաճոյ թուեսցի յաչս քո, զայնս իսկ առատաբաշխ աջոյ բարձրելոյն գրեսցես, և օժանդակութեան սուրբ կուսին Մարիամու և Մօրն Ողորմութեան և շնորհաց ընծայեսցես, և նպաստաւորութեան նախկին վիպագիր հեղինակաց մատուսցես. նաև ի Տեառնէ, և ի Մօրէն Աստուծոյ գոհացող լիցիս. զի նա է զօրութիւն մեր և ուժգնութիւն, որ եթէ նա ոչ նպաստաւորեսցէր զիս՝ ինձ անկարելի էր զիր ինչ գոյացուցանել. զի ես ոչ ինչ եմ, և ոչինչ համարեցեալ, և անմտագոյն իսկ եմ քան զամենեսեան։ Արդ՝ ընկալ քաղցրահայեաց ակնարկութեամբ զդուզն պտուղ երկանցս իմոց. որպէս ընծայի քեզ յինէն կարի սիրով և հեզութեամբ։ Ո՛ղջ լեր ի Տէր յամայր կենօք ի հրճուանս իմ։ Եւ յետ այսու ամենայնի, կամ և մնամ առ գերազանցութեանդ միշտ պատրաստական ծառայ Խաչատուր ապաշնորհ աբեղայ Իսահակեան Ջուղայեցի։

———

Բան ինչ՝ ընդ համառօտ նախադասութեամբ առ բովանդակ վերծանողս փոքեր մատենիս։

Վասն զի որովհետեւ ճանաւորեցայ բազմաձեւ յօրինել զվէպս պարսից եւ եկրատանցւոց աշխարհիս, այսինքն՝ Ցարախտանայ, եւ Արաղստանայ անցից անցելոց, սկսեալ հանդերձ Աստուծով ի հազարորդի երկհարիւրորդի եւ ի քսանութերորդի թուոյս Արամազեան Տումարիս, եւ ի վաղճանմանէ Բնարիմ իշխանին Պարսից ուրոյն մի բան միջէ վիպել. մինչեւ ի ներկայ ժամանակին յայն՝ յորում թերեւս Աստուծով գտանելոց իցէ զհանդիստ աշխարհս մեր ի խռովութեանց՝ եւ ի տարաձայնութեանց։ Եւ մեք յետ այնորիկ տացուք ապա թէ՝ դադար եւ դուլ անձանց մերոց, եւ յամբոկ արասցուք Աստուծով սկսեալ գործոյս մերոյ։ Վասն որոյ նախապէս հարկաւորեցայ աղաչել զնազելիսդ իմ, զի մի լիցի արդեօք ոք ի ձէնջ ստգտանել եւ բասրել զիս զվեհերոտ ցանկանելս, սակս չաղաւաչուրթ եւ աղճատախօս չարահիւսութեանս իմոյ։ Զի ոչ էի ես տրուպ թշուառագոյն վատաբաղդս կրթեալ եւ հրահանգեալ ի յիմաստս համալսարանի քերթողաց, եւ ոչ ի ճեմարանս վսեմագոյն իսկ հզօր սոփեստացէի արդեօք ընաւ մարզեալ։ Նա իսկ եւ ոչ արդեօք խոպան հմտեալ եւ ուսեալ էի զվոհմակս եւ զվատտս զանազան բառից բազմութեանց հայկազանս սեռի, զի .որովք ճոռոմաբան տրամադրութեամբ արտաբերեալ արտասանէի զվիպագրութիւնս

քիմ։ Որք յոյժ անկ և պատշաճ են թէպէտ ի յամենայն իրողութիւնս առօրեական մակացութեան. բայց յաւէտ գրեթէ առաւել հարկաւորք և պիտանիք են ի կիրառութեանս չարաբարդութեան բառից։ Այլ ծանիր ով ուշիմ մակացու, զի մեք ի տեղւոջս Ասպահանայ Ջուղայի՝ մանաւանդ կրթեալք՝ վարժեալք և զակատեալք իսկ եմք սնոտի ունայնական ընթացիւք, և աշխարհակործան փառամոլութեամբ, քան թէ չքնաղագոյն առաքինութեամբ, և Արփիափայլ իմաստութեամբ։ Իսկ եթէ ակաւ և տեղեակ լեալ կամիցիս թէ էր արդեօք, ասացից՝ վասն զի նախադասութիւնք և յառաջացուցմունք երկրիս մերոյ, յորում մեք կամք աստանօր զետեղեալք այսպէս վերաբերին։ Ուստի և եզրակացութիւնք և հետեւմունք նորա մինչ առ չարն կողմ հակամիտեալ վերանայ։ Որով և մեք թշուառաբար կեամք, և թշուառաբար մեռանիմք։ Թէպէտ իբրև զմարդ ծնանիմք ի յաշխարհի, բայց զօրէն քառոտանեաց և ի պորտաբուծ անասնոց կենցաղավարիմք, և որպէս զմարդակերպ անասուն, և գրեթէ՝ իբր զգազան այլանդակ և դաժանաբարոյ յածեալ շրջիմք ի մէջ մարդկանց, և ապա իսկ այնուհետև անասնաբար մեռանիմք, և իբր անզգայ և անիմաց ոք դնիմք ի հող գերեզմանի, ոչ գիտելով ընաւ. երբէք թէ՝ յոյր պատկեր և վասն ո՞յր գոյացեալ էաք, ըստ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ՝ երկնային և Հրեշտակակրօն վարդապետի։ Նա զի թագուհին իւրոյ՝ պարտ էր մեզ և վայելուչ յոյժ ճահողապէս ընդունիլ, եթէ ոք ոչ լինէր որ արգելէր։

Քանզի վասն գործելոյ զգժնեայ չարութիւնս, և հնարելոյ զնորագիւտ ոճրագործութիւնս, եմք այնքան զգաստք՝ արի՝ և արթունք. մինչ զի եթէ զբովանդակ ժամանակս կենաց մերոց ծախիցեմք ի նոյն՝ ոչ դանդաղիմք, և ոչ երբէք յուլանամք, և ոչ ասեմք թէ՝ հե-

բէք և չեռ է։ Այլ վասն գործելոյ դրացիս. և վասն ներգործելոյ զատաջինութիւնս, եմք այնքան հեշտք և պիտձարք. մինչ զի հազիւ թէ՝ զդուզն ժամանակս կենաց մերոց ընծեռեսք խոկ բարեգործութեան, և ոչ երբէք առնելով զըստի ինչ՞ մեղաց առեաք թէ՝ չէր բաւական է։

Արդ ասացէքն ոչ գիտեմ ես թէ՝ որով եղանակալացից զթշուառութիւնս մեր, և կամ թէ որպիսեակերպիւ. կարացից հնար ինձ հայթայթել առ ի ազատել այսպիսի դաժանագոյն մոլեգնութիւնս եղկելի զանձն իմ։ Արդ, բաղձում է և յոյժ բաղձում զժամանակաւորս թշուառութիւնս մեր՝ զորս կամիմ առնել. բայց ձեռս զամենայն ներփակեսցեալ ի սրտի իմում։ Զի ոչ տայ թոյլ ինձ զդառնութիւն և զնեղասրտութիւն անձին իմոյ մի ըստ միոջէ արտայայտել և բացայայտել լեզուաւ իմով. զի՞նաձայն մշտաթախիծ թշուառութիւնս վտանգից մերոց՝ զորս զմեզէք յար պարուանդեալ, որով և զրեթէ՝ մեք ազգս Հայկական, մանաւանդ Նոր-Ջուղայի բնակիչքս յոյժ և յոյժ թշուառացաք։ Արդ՝ միայն զայս կամիմ առել, և ծանուցանել խանդակաթ սրտիւ սիրելեացս իմոց, թէպէտ և զայրասցին ի վերայ իմ յոյժ՝ որք լուիցեն. Քանզի այնքան անդուստ անզգամացեալք եմք մեք ի յանզգամութիւնս մեր, և այնքան անռանձ լեալք եմք և լծընկէց, որովք և ի ծայրագոյն թշուառութեանս ամբարշտութեան եմք խակ մակաժամանեալ. մինչ զի ոչ գիտեմք զպատիւ մարդկութեանս մերոյ՝ մինչ յատկօրէնութիւն է ամենայն կենդանեաց ճանաչել զինքն թէ վասն ո՞յր իցէ գոյացեալ։ Այլ մեք առաւել հետեւիմք արդեօք ստութեան՝ քան եթէ ճշմարտութեան, որ է մոլութիւն իմն այլանդակ, յորմէ ամենայն մոլութիւնք կախեալ կան. Որով և մարդս տարադրելի՝ և տարատարօրհեալ բաժանի ի մարդկային կացութենէ. և վատթարագոյն քան զէշս, և զամերան անասունս տրամադրեալ զտանի։ Նա խոկ և

ի մէջ անբան անասնոց յոյժ յոգունս տեսանեմք, որք ջանան գործել զօգուտս իւրեանց: Բայց ի միջի մերում ի՞նչ սակաւուց հազիւ գտանեմք, և գրեթէ՝ նա ոչ երբէք խորհօղ և գուն գործող վասն օգտի հասարակաց: Այլ բնաւքս իսպառ արդեօք կարի կազմ և պատրաստ եմք անօրինելոյ և խորհելոյ զօգուտս մեր, և գրկելոյ և խածատելոյ զայնոսիկ՝ որք յոյժ խղճալիք են և տարաբաղդք. ուստի որով և ամենեքեանքս իսպառ ընկլուզեալ և գահավիժեալ ի խորս ծովու սաստիկ տըրկութեան իսկ ընկճեալ կործանիմք, և լինիմք իսկ արդեօք՝ ազգի ծեծանք, և աշխարհի Թքանք: Զի ոչ վայրապար ինչ եղև ասացեալ ի յառաքելոյն, այլ զի զօրութեամբ և զգօնութեամբ թէ մի խածատիցէք զմիմեանս, գուցէ ի միմեանց խածատիցիք:

Եւ այս բարք իսկ է արդեօք յերկրիս մերոյ՝ յորում մեք իսկ ծնեալք՝ սնեալք՝ և զարգացեալ եմք. քանզի ասեն օլօմայք, այսինքն՝ իմաստասէրք քաղաքիս Սպահանայ թէ՝ որպէս կնիւն՝ կամ պրդու (որ է խոտ իմն բուսեալ յաւէտ ի ջրաշեղջ յեզերեայս, որոյ պարսից բարբառովն փիզօռ ասեն) պահէ զատն կամ զպաղն, այսպէս և սուտն պահէ զՍպահան քաղաքս:

Բայց արդ՝ և մեք բնակեալք ի սոսա, որոց օրէնքն և կարգադրութիւնքն առաւել ի յունայնութիւնս, և ի ստութիւնս տեսանեմք արդեօք հիմնաւորեալ, քան թէ ի բարութիւնս և ի ճշմարտութիւնս, յորոց և ի մեզ իսկ սփռեալ տարածեցաւ, թէպէտ և օրէնքն Աստուածայինք մինչև ցայժմ, և մինչև առ յապա ունիմք Աստուծով հաստատուն: Այլ զի՞նչ օգուտ և շահ իցէ մեզ արդեօք՝ ունել զօրէնս Աստուծոյ, և կեալ թարց օրինաց, այսինքն՝ զկիրառութիւն գործոյս մերոյ բարբարոսական և հեթանոսական երևեցուցանել: Ո՛չ ապաքէն արդեօք իսկ սրբազան առաքեալն Պօղոս յայտնապէս

վճիռ տայ ասելով. դու, ասէ՝ որ պարծիս օրինօք, յանցանել ընդ օրէնսն զԱստուած անարգես: Ո՛չ վասն ձեր ասէ՝ անունն Աստուծոյ հայհոյի ի մէջ հեթանոսաց. որպէս և գրեալ է ի գիրս պատգամաց մարգարէիցն: Արդ ուրեմն զմէ պահանջէք զմէնջ կատարեալ զիմաստասիրութիւն, մեք որ այսչափ չարեօք շուրջ զմեօք զմածեալ ունիմք: Ապա աղաչեմ յոյժ թախանձանօք՝ ով անձկալի և զգօնամիտ վերծանողք, երկայնմտութեամբ անսալ աղաչանացս իմոց, և շնորհել զթողութիւն սխալանացս իմոց, և անբաւիրս թողուլ զիս՝ որ ես չնչինս ըստ յայսմ մասին սանրիւրեալ իցեմ և յանցեալ. քանզի նախ քան զանսութիւն՝ Աստուածաբանել սկսայ, ըստ կչտամբութեան Տեառն Մովսիսի երջանիկ Խորենացւոյն՝ որ ի յողբս: Եւ անդրէն դառնամ և ասեմ, լուարուք ինձ ով Ազնուազոյն և բաղձալի ընթերցողք, և տուք ինձ զիրաւունս առաջադրեալ ատութեանս իմոյ: Արդ՝ միթէ դպրոցք և համալսարանք ձեր հայրենեաց՝ կային աստանին ի տեղւոջս Նոր-Ջուղայի վանացս. զի որով ըստ ոճի բուն քերթողաց վայելչաբար և հեթեթ կերպիւ ծերունաբար յայս հանդէս մտանել ատակէի, և կամ անսահրիւր անսխալաբար զառաջադրեալ գործս իմ ի կատար և յամբոկ հասուցանէի: Քանզի և այս իսկ արդեօք՝ զոր կամէ ինձ առնել, ոչ եթէ իմով ինչ իմաստութեամբ, յորմէ զուրկ եմ բոլորս: Այլ միայն նախ՝ ձրիաբաշխ շնորհիւն Աստուծոյ ակն ունիմ ժամանել ի կատար և ապա ջանիւ. թէև շնորհակալ եք ի մերոց աշխատութեանցս ոչ գտանիցի: Քանզի Վիրգիլիոս ասէ թէ՝ յարատև աշխատանքն յաղթէ զամենայն դժուարինս: Իսկ Պղատոն ասէ՝ քրտամբ և աշխատութեամբ բուսանի զասա առաքինութեան: Նաև՝ զիտացիր իսկ արդեօք ով ուշիմ ընթերցող՝ բաց ի ձրիական պար-

գնաց, վարկեա թէ Աստուած ոչ է տուեալ թարց աշխատանաց ումեք զեր ինչ։

Որոյ աղագաւ Աշխատանքն է մայր բարեհամբաւոյ զի յաղթողքն և հռչակաւորքն աշխատանօք անուանիք եղեն յաշխարհի։ Նա իսկ և գոգջիր թէ՝ ոչ ինչ իր եղև գերապայծառ և չքնաղագոյն թարց աշխատանաց. ոչ առաքինութիւնք, ոչ արհեստք, և ոչ այլ ինչ բարի գործք։ Իսկ եթէ զլեզու ունիցէր իսկ աշխատութիւնն՝ կարէր բարձրաձայն աղաղակել և ասել թէ՝ առանց իմ (ով մարդիկք) ոչինչ իւիք կարէք պարծիլ և պանձալ։ Իսկ ծուլութիւննէ գլխաւոր ամենայն մոլութեանց, որով և մարդս լքեալ տարաներքի ի յամենայն հոգևոր և ի մարմնաւոր բարութեանց։ Ուստի և Քրիստոս ամենակարող Տէրն մեր ասէր ջանացարուք մտանել ընդ նեղ դուռն։

Վասն որոյ և երջանկափայլ Շնորհալին խրատէ՝ ջանիւ հասցես, ասէ, շնորհաց, մի ծոյլ կենար և գեգերած։ Եւ այլ ուրեք գրէ՝ եթէ մօրդ ես բութ և ծուլ, ջանիւ զիմաստն կեր և կուլ։ Ուրեմն և ես թշուառ հէքս որչափ՝ և որքան կարեմ շնորհիւ Ամենատեառն նկրտեալ ջանամ, և յարախոյզ ճգամբ աշխատիմ առ ի յօգուտ ցանկալի ընթերցասէր եղբարցս իմոց պանձալեաց։

Եւ վերջապէս՝ ոչ այլ ինչ ի ձէնջ. բայց միայն նախ՝ աղօթիւք սատրել՝ և օգնել ժամմ զօրավիգ լինելով տկարութեանս իմոյ եղկելւոյս՝ զի զաւդ և զգուշն ժամանակս կենաց իմոց՝ ի յօգուտ Ազնուաբարոյ ազգիս մերոյ Հայկազնեայ՝ անդադար երկամբ, և անդրադ խորհրդով ծախեցից։ Երկրորդ շնորհել ներումն աղաչեմ յաւելնագոյն յանդգնութեանս իմոյ, զի յիմար մոօք, և տհաս լեզուաւ ի յայսպիսի չքնաղ և զարմանալի դժուարագոյն գործ մխեցայ, որ չէր ինձ օրէն արդեօք, եթէ ոչ այնոցիկ՝ որք կրթեալք իցեն իսկ ի միմասս մակացութեան փիլիսոփայից, և հմուտք արհեստի



Օգնեա Ամենազօր Սուրբ Հոգի Աստուած ճշմարիտ․

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ՃԱՌԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀԻՍ



սկ արդ՝ ծաներո՛ւք ո՛վ վսեմագոյն և անձկալի անվթար վերծանողք։ Քանզի թէպէտ ի հերուն հետէ՝ և կանխաւ քան զայս, ախորժ սիրով, և խանդաղակաթ ըղձիւ իսկ ցանկայի առ ի առնել զճառագրութիւնս զայս։ Սակայն նախ՝ զյոգնատարապ կիրառութիւնս իմ, երկրորդ՝ զբիւրակերպ վշտակրութիւնս՝ որք ի պարսից անօրինաց օրըստօրէ անընդհատ՝ և յաջորդահոլով աշխատանօք զօրհանապազ ի մեզ ուղխահանգոյն հեղեալ յորդապէս գային, երրորդ զակարութիւն անձինս, և զյիմարութիւն մտացս իմոց և զպակասութիւն հարկաւորութեանս իմոյ ընկճեալ կասեցուցանէին՝ և արգել և խափանիչք իսկ լինէին զառաջադրեալ գործառնութեանս իմոյ։



Օգնեա Ամենազօր Սուրբ Հոգի Աստուած ճշմարիտ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ՃԱՌԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀԻՍ

Իսկ արդ՝ ծաներուք ով վսեմագոյն եւ անձկալի անվթար վերծանողք։ Քանզի թէ-պէտ ի ներուն հետէ՝ եւ կանխաւ քան զայս, աժխոյժ սիրով, եւ խանդաղակաթ ըղձիւ իսկ ցանկայի առ ի առնել զճառագրութիւնս զայս։ Սակայն նախ՝ զյոգնատա-րաղ կիրառութիւնս իմ, երկրորդ՝ զըխւրակերպ վշտա-կրութիւնս՝ որք ի պարսից անօրինաց օրըստօրէ անընդ-հատ՝ եւ յաջորդահոլով աշխատանօք զօրհանապազ ի մեզ ուղխահանդոյն հեղեալ յորդապէս գային, երրորդ զակա-րութիւն անձինս, եւ զյիմարութիւն մտացս իմոց եւ զպա-կասութիւն հարկաւորութեանս իմոյ ընկճեալ կասեցու-ցանէին՝ եւ արգել եւ խափանիչք իսկ լինէին զառաջա-դրեալ գործառնութեանս իմոյ։



Օգնեա Ամենազօր Սուրբ Հոգի Աստուած ճշմարիտ․

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ՃԱՌԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀԻՍ



Իսկ արդ՝ ծաներուք ո՛վ վսեմագոյն և անձկալի անվթար վերծանողք։ Քանզի թէպէտ ի հերուն հետէ՝ և կանխաւ քան զայս, ածխոյժ սիրով, և խանդաղակաթ ըղձիւ խոկ ցանկայի առ ի առնել զճառագրութիւնս զայս։ Սակայն նախ՝ զյոգնատարազ կիրառութիւնս իմ, երկրորդ՝ զբիւրակերպ վշտակրութիւնս՝ որք ի պարսից անօրինաց օրըստօրէ անընդհատ՝ և յաջորդահոլով աշխատանօք զօրհանապազ ի մեզ ուղխահանգոյն հեղեալ յորդապէս գային, երրորդ զտկարութիւն անձինս, և զյիմարութիւն մտացս իմոց և զպակասութիւն հարկաւորութեանս իմոյ ընկճեալ կասեցուցանէին՝ և արգել և խափանիչք խոկ լինէին զառաջադրեալ գործառնութեանս իմոյ։



Օգնեա Ամենազօր Սուրբ Հոգի Աստուած ճշմարիտ.

Մ Ա Ս Ն   Ա Ռ Ա Ջ Ի Ն

Գ Ր Ա Կ   Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՅԱՂԱԳՍ ՃԱՌԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀԻՍ

սկ արդ՝ ծանիրուք ով վսեմագոյն և անձկալի անվթար վերծանողք։ Քանզի թէպէտ ի ներումն հեռէ՝ և կանխաւ քան զայս, ախորժ սիրով, և խանդաղակաթ բղձիւ իսկ ցանկալի առ ի առնել զճառագրութիւնս զայս։ Սակայն նախ՝ զյոգնատարազ կիրառնութիւնս իմ, երկրորդ՝ զբիւրակերպ վշտակրութիւնս՝ որք ի պարսից անօրինաց օրըստօրէ անընդհատ՝ և յաջորդահոլով աշխատանօք զօրհանապազ ի մեզ ուղխահանդոյն հեղեալ յորդապէս գային, երրորդ զակարութիւն անձինս, և զյիմարութիւն մտացս իմոց և զպակասութիւն հարկաւորութեանս իմոյ ընկճեալ կասեցուցանէին՝ և արգել և խափանինչք իսկ լինէին զառաջադրեալ գործառնութեանս իմոյ։

Այլ յորժամ ստիպեցայ յոմանց պանծալեաց՝ գրեթէ զայսօրիկ զամենայն, որք որպէս զքաղեղն վնասակար պարաւանդեալ էին զինև, ի բաց թօթափեցի յանձնէ իմմէ և Շնորհիւ Տեառն քաջալերեցայ, և յառաջ մատեայ առնել զայս ճառագրութիւն՝ իբր զբօսանս տալով Ազնուաբարոյ և չքնաղագեղ ազգիս Հայկականս։ Որպէս զի այսու զբաղեալք՝ մոռասցեն զվնասակար ըզբօսանս. զխրատաչիք սուզիւ՝ զի և ես այսու զխրատուրութեամբ յանձն առի գրել զայս մատեան, զի գտնես զգաստակեցութիւնն (որ է մայր ամենայն մեղաց, խորհրդանոց ամենից չարութեանց, խանգարիչ ժողովրդեան, և զայրացուցանօղ Տեառն Աստուծոյ Ամենակալին). բարեպէս անցուցանել, և պատշաճաբար կարգաւորել կարէի։ Քանզի Փիլօնի փիլիսոփային մինչ հարցին թէ՝ զինչ գոյ յաշխարհի դժուարին. ասաց թէ՝ զգաղտնի և զանխուլ խորհուրդս լռել, զզգաստականութիւն բարւոք անցուցանել, և նախատանաց համբերել։

Իսկ որովհետև կամէ ինձ առնել և յօրինել զայս մատենագրութիւն, որոյ աղագաւ կամիմ բացայայտել նախապէս՝ և ասել ձեզ բաղձալեացս իմոց զայս ինչ։ Արդ՝ մինչ կամք մեր է առնել բանիս զվէպս Պարսից աշխարհիս, զոր ի թուոջս ՌՄԻԸ ի վայր անդր ձըգելով ներգործեցան, զորոց եղէ ես ականատես՝ և ականջալուր. վասն որոյ արժան և ճահ վարկայ՝ գիտել և իմանալ նախկինաբար թէ՝ ոյք յորոց նախասկիզբն գտան Թագաւորելոյն ի վերայ պարսից, և անդուստ առեալ ապա ի վերուստ ի վայր իջանել մինչև ի ժամանակս մեր կարճառօտ քննութեամբ։ Այլ ո՛չ ապաքէն զգործս՝ և զարութիւնս նոցա ուրոյն վիպելով, զորոց որք նախ քան զմեզ էին՝ պեղեցին և սեթևեթեալ ոճով գրեցին. այլ և եթ միայն զանուանս նոցա յիշատակելով և եթէ արդեօք մարթ ինչ իցէ՝ և զթիւս ամաց Թագաւորելոյն

նոցա, այսինքն՝ եթէ յորում ամի, և քանի ամ թագաւորեցին։ Բայց արդ՝ յայտնի իսկ է արդեօք ամենեցուն՝ որք բարւոք ուշ եդեալ յառնեցին, և ճոխաբար հետևեցին. զի ոչ գոյ միաբանութիւն ի մէջ թարգմանչաց և պատմագրաց, զի տինա եթէ ուրեք ուրեք համաձայնին, ի թիւս և ի յայլ բազում տեղիս տարաձայնին։ Քանզի բազումք ի յառաջնոց վարդապետաց՝ և ի սորոց հարց անտի գրեցին՝ ըստ իւրաքանչիւր գիտման քննութեամբ ի կէր արկեալ՝ վասն ստուգելոյ ամաց անցելոց. սակայն անմիաբան և տարաշաւիղ հանդիպեցան իսկ միմեանց։ Նա իսկ՝ Եւսեբի վկայէ վասն ոչ գիտելոյ ճշգրտիւ զանցեալ ժամանակսն, զբան Տեառն վկայութիւն առնլով որ ասաց առ աշակերտսն՝ եթէ ոչ է պարտ ձեզ գիտել զժամս՝ և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան [1]։ Եւ զայս՝ ոչ միայն վասն հանդերձելոյն ասէ, այլ և վասն անցելոյն ժամանակաց։ Սորին աղագաւ համայն պատմիչք՝ և ժամանակագիրք, ոչ կարացին զուգաձայն և համեմատ միմեանց հանդիպիլ. այլ տարաշաւիղ և անմիաբան գտան ամենեքեան։

Քանզի ըստ Եւսեբեայ ժամանակագրութեան՝ լինի յԱդամայ մինչև ի ծնունդ Կենարարին, ԵՌԲՃՋԴ։ Եւ ըստ ասորոցն՝ ԵՌԻԶ։ Եւ ըստ այլոց, ԵՌԴՂԱ։ Եւ ըստ եօթանասնիցն՝ որով մեծն և սքանչելին Եպիփան վարի, որում և մեք հետևիլ սաստել կամիմք՝ քան թէ յայլոց ումանց։—ԵՌԴՃՂԹ։ Իսկ այլք ումանք թիւ եօթանասնիցն այսպէս կարծեն, այսինքն ԵՌՃՂԸ, որոց հրաշալին Եպիփան ոչ ընդունի, այլ սկսեալ Ադամայ՝ մինչև ի Քրիստոս, ԸՆՂԹ ամ դնէ [2]։

1) Գործք Ա. Գւ. 7։

2) Իսկ Եւսեբի Պամփիւլեայ կեսարացւոյ ժամանակագրութեան մէջ (Վենետիկ 1818 թ.) գտանք այսպէս՝

Եւ վերջապէս՝ զայս ինչ և զառ ի յինէն ծանիցէ զձեզ խոհեմութիւն։

Զի համայն պատմիչք՝ ոչ միայն Ասիականացն կողմանց, այլև՝ Եւրոպականացն յարևմտից, և Լիբիականացն Հարաւայնոց. ըստ բանի Աստուածաշունչ սուրբ գրոյն՝ սկիզբն պետութեան ի Ներրովթայ առնել գրեն։

Արդ՝ այս Ներրովթ՝ որ ասի Բէլ, սկիզբն թագաւորութեան եդ ի Բաբիլօն քաղդէացւոց. և ի ժամանակս սորա եղև ամբարիշտ խորհուրդ ամբարտակին շինութեան, յերկրին Սենայար, և ի Թագանէ դաշտին [1]) այսինքն Հիլէ քաղաքի և ի Թուոյն Ադամայ վեցհարիւրորդի և վաթսուներրորդի։ Եւ յաւուրս սորա տարատրոհեալ բաժանեցան լեզուք՝ ի բարբառս ՀԲ։ Եւ ապա սպանեալ սա ի ձեռս քաջահզօր և բարեբաղդ խոհեմագոյն հսկային Հայկայ նախնւոյն Հայոց, որպէս և աւանիկ գլխագոյն պատմութիւնս սոցա՝ գրեալ է մեծն և երջա-

---

«Ադամայ մինչեւ ցերկրորդ ամն Դարեհի ամք ՏՈՁ-4680 թ.» էջ 189. երեսուներորդ տող ապա՝

«Եւ յերկրորդ ամէն Դարեհի մինչեւ ցԱնտիոքոս ամք ՅԽԷ=347 տարի» 192 երես 19-երորդ տող.

Եւ «Յետփիանէս Անտիոքայ մինչեւ ի հնգետասաներորդ ամն Տիբերեայ ամք ՄԱ տարի=201» 195 եր. 8 տող.

Իսկ Տիբերիոսի թագաւորութեան ժե տարում ծնուեց փրկիչը, ուրեմն Ադամից մինչեւ փրկչի ծնունդը կը լինի 4680+347+201=5228 տարի.

1) Այս կտորները քաղել է նա Ծննդոց գրքից. որովհետեւ Բաղան դաշտ Խորենացու պատմութեան մէջ չէ յիշուած. այլ յիշւում է Ծննդոց գրքի մէջ՝ որտեղ ասուած է. «Իբրեւ գնեբրովթ սկայ առաջի Աստուծոյ որ եւ եղեւ սկիզբն թագաւորութեան նորա Բաբելովն. եւ Որեք. եւ Աքադ. եւ Քաղանէ յերկրին Սենաար յերկրէն յայնմանէ ել Ասուր եւ շինեաց զՆինուէ» Ծննդոց Գլ. Ժ. 9—12.

նիկ Մովսէս Խորենացին ի ճառագրութեան իւրում. տեսցես անդ 1)։

Զորմէ և ես սակաւ ինչ հանեալ ի պատմութեանց անտի, և գրեցի ի գիրս նախկին, որ վասն ազգիս հայոց, ի յերկրորդ պրակին, և յերկրորդ հատուածին։ Եւ զկնի մահուանն Բէլայ՝ յետ քառասուն ամի, ասէ Միխայէլ պատմիչն ասորւոց՝ շինեցաւ Ասպահան քաղաք ի Կամբիւրոս Թագաւորէ քաղդէացւոց 2)։ Իսկ հոգելից վարդապետն մեր Վարդան՝ գրէ ի վիպագրութեան իւրում թէ՝ ի Բէլայ շինեցաւ զԱսպահան քաղաքը։ Իսկ յետոյ ի զաւակաց Բէլայ փոխեալ զաթոռնս իւրեանց ի Նինուէ քաղաք Ասորեստանեայց, այսինքն է՝ Մուսուլ։

Եւ մինչև ցՍարդանապալոս Թագաւորեցին, որ յերեսներորդ՝ և իններորդ ի Բամայ, որպէս և ասուցիւ յայտ իսկ է ի գիրս սրբազան Բերթողահօրն Մովսիսի յառաջին հատորն 3)։ Եւ յաւուրս Սարդանապալայ գնաց մարգարէն յովնան քարոզել ի Նինուէ 4). սա զղջացաւ և դարձաւ առ Տէր ապաշխարութեամբ։ Բայց յետոյ Վարբակէս 5) զօրավարն մեդացւոց, այսինքն քրդաց՝ սպան զՍարդանապալ արքայն ասորեստանեայց, օգնականութեամբն Պարոյրայ Հայոց արքային։ Այլ Միխայէլ ասորին ասէ թէ՝ և տեսեալ Սարդանապալայ թէ յաղթի ի Մարաց, այրեաց զանձն՝ զի մի անկցի ի ձեռս նո—

---

1) Մով. Խոր. Գլ. ԺԱ.

2) Սա (Կամբիւրոս Թագ.) շինեաց զՇօշ քաղաք. որ ասեն զԱսպահան. Ժամանակագրութիւն Միխայէլ Ասորւոյ. էջ 18. Երուսաղէմ 1871.

3) Խոր. Գլ. 19.

4) Մարգար. Յով. Գ. 3.

5) Վարբակէսը Թագաւորեց 28 տարի. Եւս. Ժամ. էջ 101.

րա [1]): Եւ արդ՝ զինչնեցէ՝ եբարձ Վարբակէս Մար՝ զթագաւորութիւն որդւոցն Նեբրովթայ, և թողեալ վերակացու և ոստիկան ի Նինուէ, այս է Մուսուլ. փոխեաց զթագաւորութիւնն ի Մարս, այսինքն՝ ի քուրդս:

Եւ այս Վարբակէս՝ թագաւորեցոյց ի Բաբելօն ի վերայ քաղդէացւոց զԲէլասիս ընկերակից իւր [2]), և ի վերայ հայոց՝ զՊարոյր զօրավիգ իւր յորդւոց և ի տոհմէ Հայկայ: Արդ՝ և յետ սակաւուց թագաւորէ ի Նինուէ ի վերայ Ասորեստանեայց Փուայ՝ յորմէ սերեցան Թագղաթփալասար [3]), Սաղմանասար, Սենեքարիմ [4]) և Ասորդան, զորոց անուանքն յիշին իսկ ի սուրբ գիրս: Յետ որոց՝ յաւուրս Եզեկիայ Արքայի Հրէաստանի, Մարովդակ-բալադան արքայն Բաբիլոնի [5]) (որոյ անունն յիշի ի յԱստուածաշունչ գիրս՝ Դ. Թագ. Ի. գլուխն). սպան զԱսորդան, և իսպառ եբարձ զթագաւորութիւն Ասորեստանեայ ի Նինուէէ: Եւ ինքն Մարովդակ-բալադան միայն իշխեաց քաղդէացւոց և Ասորեստանեայց. և յորմէ իսկ սերեցան Ասուերոս, Նաբուբոլասար [6]), Նաբուգոդոնոսոր և Բաղդասար, զոր սպան Դարեհ արշօրեան [7]) ի զաւակէ Մարաց՝ և ինքն թագաւորեաց:

---

1) Ինչպէս երեւում է Միխայէլ Ասորին էլ առել է այդ տեղեկութիւնները Եւսեբէոս Կեսարացու Հետեւեալ կտորից. «Թոննոս Կոնկողերոսն, որ յունարէն կոչի Սարդանապաղոս. մատնեալ ի պարտութիւն ի Վարբակայ եւ ի Բեղեսոսէ՝ ինքնին զանձն ի հուր մատնեաց»։ Եւսեբ. Ժամանակ. էջ 100.

2) Իսկ Եւսեբ. Կեսարացին գրում է. «Եւ զԱսորեստանեայց իշխանութիւնն Վարբակայ բարձեալ՝ զԲեղիսիս կացոյց արքայ Բաբելացւոց. եւ ինքն ի Մարս փոխեաց զԱսորեստանեայց իշխանութիւնն. էջ 100.

3) Թագղաթփաղասար. Դ. Թագ. Ի—29.

4) Սենեքերիմ. Դ. Թագ. ԺԸ—13.

5) Մարովդաք Բաղդան. Դ. Թագ. Ի—12.

6) Ըստ Միխայէլ Ասորւոյ՝ Նաբուպալասար. էջ 49.

7) Դարեհի որդւոյ Արշաւրայ. Մարգ. Դան. գլ. Թ—1.

Եւ Դարեհ արշօրեան իբրև ամս երիս թագաւորեաց, հասեալ նմա զվախճան մահու մեռանի։ Եւ ապա Կիւրոս արքայ պարսից՝ յինքն գրաւեաց զպետութիւն Բաբելացւոց, և Ասորեստանեայց, և թագաւորեաց ի վերայ նոցա։ Իսկ ապա ի ձեռն Տիգրանայ արքայի հայոց սպանանէ զԱժդահակ թագաւորն մարաց. այսինքն՝ որ ի մեր բարբառ վիշապ թարգմանի, յորմէ և յոյժ ճոխաբար վիպէ ցանկալի Խորենացին։ Եւ էառ Կիւրոս Պարսիկ զթագաւորութիւն նորա, և այսպէս միահեծան իշխանութեամբ միապետեաց Կիւրոս ի վերայ չորից թագաւորութեանց. այսինքն՝ Պարսից, Մարաց, Ասորեստանեայց, և Քաղդէացւոց [1]։

Արդ՝ սա նախ լեալ ասեն համակ պատմիչք, և ժամանակագիրք՝ նախասկիզբն պարսից թագաւորաց, որ հաստատեաց զգահ թագաւորութեան ի Պարս և հրաման ետ հրէից ելանել ի գերութենէ՝ և շինել զՏաճարն Տեառն յԵրուսաղէմ։ Զորմէ գրէ մարգարէն Եսայի ի 45, 1։ Այսպէս ասէ Տէր յօծեալն իւր ցԿիւրոս, զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա՝ հնազանդեցուցանել առաջի նորա զազգս, և զզօրութիւն թագաւորաց խորտակեցից. բացից առաջի նորա զդրունս, և քաղաքք մի փակեսցին, և այլն։ Եւ դարձեալ ասէ Տէր Աստուած սոյն մարգարէիւն ի 47, 6. Ես բարկացեալ էի նոցա, և մատնեցի զնոսա ի ձեռս քո. և դու ոչ արարեր ի վերայ նոցա ողորմութիւն։ Զայս ասէ առ Բաբելացիս՝ որք գերելոցն ոչ ողորմէին։ Ուստի և ի նոյն գլխոյն՝ ես, ասէ՝ մատնեցից զձեզ Պարսից, որք ոչ խնայեսցեն ծերոց, մանկանց, կուսանաց և ամենայն չափու և ցեղի։

---

1) Մեսրովբ սարկաւագ Թաղիադեանցի պատմութեան մէջ (Կալկաթա—1846 էջ 3) Կիւրոսը կոչւում է նաև Քէյումարս, որն էր փիշդադեան հարստութեան սկզբնահայր. Կիւրոսով էլ սկսուեց Աքեմենեան տէրութիւնը (Պատմ. Սպա. էջ 4)։

տակի ի յառաջներորդ Օմարայ՝ երրորդ թագաւորէն Հագարացւոց, որ ի Մահմետէ էր սկսեալ։ Եւ յայնմհետէ բարձեալ՝ կործանեալ աւերի զգահ և զթագաւորութիւն պարսից, որոց եղև թիւ իշխանութեանն՝ ամք ԳՃՂԲ։ Յետ այսորիկ տիրեցին պարսից՝ հագարացիք. որք էին դենիւ և մասամբ մահմետականք։ Բայց ըստ Ղեոնդեայ [1], որ գրէ ի պատմութեան իւրում թէ՝ տեւեաց զժամանակ Սասանեանց թագաւորութեանն՝ ՆՁԱ ամս։ Իսկ ըստ այլոց ոմանց՝ գրեն թէ՝ ի վերայ էանց ցեղին Սասանայ ՆԺԸ ամս։ Այլ մեք ըստ մերում հետազօտութեանն՝ այն է հաւաստին, ըստ որում և կանխաւ եդաք. քանզի կարի յետախոյզ որոնմամբ գննեցաք ի բազում ճառագրութեանս, որպէս և գտաք զճըշգրիտն՝ ըստ այնմ և եդաք։

Արդ՝ գիտասցեալ մեր կարճ ի կարճոյ և հակիրճիւ զայսոսիկ. բե՛ր ուրեմն աստանօր զի տեսցուք թէ՝ ազգ պարսից որդւոց յումմէ՞ շառաւիղեցան և ակաղձեալ լցին զսահմանս բնակութեան պարսից աշխարհին։ Յայտնի իսկ է ամենեցուն՝ զի ազգս պարսից ի Եղիմայ [2] յորդւոցն Սեմայ՝ սերեալք ծագեցան, և ոչ են սոքա ի տոհմէ Իսմայէլեան ի Հագարայ, աղախնոյն Աբրահամու՝ որպէս ոմանք կարծեն. և ոչ ի զաւակացն Յաբեթայ յառաջեալք, այլ ի Սեմայ որդւոյն՝ և ի յԵլիմայ։ Նմին իրի և երբեմն ազգ պարսից կոչին ի սուրբ գիրս հատարակապէս առեալ Եղիմացիք, որպէս յայտ է ի գիրս գործոց առաքելոց, և ի յայլ տեղիս. Յուդիթ. 1. 6, և Եսայի 21. 2։ Բայց յատկապէս առեալ՝ է անուն գաւառի, որ է ի պարսից աշխարհին, որոյ անուամբ կոչի

1) Ղեւոնդ. պատմագիր էջ 7 (Պետերբ. 1887).

2) Այսինքն յԵլամայ որն էր Սեմի որդին (Ծնն. Ժ—22).

և գլխաւոր քաղաքն [1], որ ի հնումն էր արքայանիստ, զոր կամէր աւար առնուլ արքայն Անտիոքոս, ըստ այնմ, որ ի 1. Մակ. 6. 1։ Որոյ բնակիչք կոչէին Ելիմացիք։ Էր սա առ գետովն Հաղդոմանայ, և զկնի անցելոց ժամանակաց աւերեցաւ. այլ հուպ ի նոյն տեղին շինեցաւ փոխանակ նորա այլ քաղաք, որ այժմ ի Նարգեանս Շիրազ [2] առ ձայնի։

Արդ՝ զայս քաղաքս, յորմէ ի վեր անդր բացատրեցաք, որում ազգ Յունաց Պերսէպոլիս կոչէին. այրեցաւ ի մեծէն Աղէքսանդրէ Մակեդոնացւոյ, վասն միոյ կնոջ պոռնկի անդ փախուցելոյ, բայց յետոյ առ ամօթոյ չքեղապէս վերանորոգեաց։

—⁂—

1) Որ է Ելիմ կամ Պերսեպոլիս. սոյն անունով կոչւում էր նաև Ստահր գաւառը. ուր Սասանեան տէրութիւնը սկիզբն էր առել և ուր կենտրոնն էր նորա կրօնի (տես պատմ. Սասանեան էջ 90) գտնւում էր Միրդուշտ դաշտում. կոչւում է նաև Թախտը Ջմշիդ (պատմ. Թաղիադեանցի. էջ 15).

2) Շիրազը 35 մղոնով հեռու է Պերսեպոլսից ըստ Մ. Թաղիադեանցի էջ 15.

ԳՐԱԿ ԵՐՐՈՐԴ

Սկսեալ ի Կիւրոսէ մինչեւ ցԴարեհ Կոդմոս, որ սպանաւ ի յԱղեքսանդրէ Մեծէ, դնելով ընդ հուպ եւ զբուականս ժամանակաց ըստ խոստման մերում։

Ա. Եւ ապա թագաւորեաց Կիւրոս՝ զկնի Դարեհի Արչօրեան արքայի Մեդացւոց, որպէս ասացաք յառաջագոյն. ի թուոջն Ադամայ՝ ըստ ատուգելոյ քաջահանճարից նախնեաց, այն իսկ է՝ ըստ որում՝ զոր ի վեր անդր եդաք։ Սա այս Կիւրոս՝ էր որդի Կամպիւսեայ պարսիկ ազնուականի, ընդ որում, ըստ ասելոյ ոմանց՝ Աժդահակ արքայ մարաց և պարսից ամուսնացոյց ըզդուստր իւր մանդանէ, յորմէ ծնանի Կիւրոս, որ յանուն հօրն կոչի Կամբիւսեան։ Նարկ. ՂԶ։ Սա թագաւորեաց ի վերայ պարսից և ի կողմանց ասիացւոց ընդ ամենայն ամս՝ երեսուն 1)։

*Բ. Յետ որոյ թագաւորեաց Արտաս որդի նորա, որ կոչեցաւ Կամպիւսէս Նաբուգոդոնոսոր.*2) *սա արգել զշինուածն Տաճարին Տեառն յԵրուսաղէմ։ Զորմէ ասու-*

---

1) Կիւրոսն (558—529) էր Աքեմենեան ցեղից և եղաւ պարսից միապետութեան հիմնադիրը։

2) 529—522։

գեն ոմանք՝ թէպէտ և ոմանք ոչ ընդունին, թէ յորոյ յաւուրս՝ յետ մահուան հօր իւրոյ Կիւրոսի. զօրավարն Մարաց Արփաքսադ՝ վտարանջեալ ի նմանէ թագաւորէ ի Մարս, և շինէ զքաղաքն Եկբատան, այս է Ահմատան ի տեղի ամուր ապաստանի, որպէս պատմի ի գիրս Յուդիթայ [1]: Եւ սոյն արքայս՝ ամս վեց պատերազմեալ ընդ նմա, պարտեաց զնա, և իսպառ եբարձ զպետութիւն ի Մարաց. և առաքեաց զՀողոփեռնէս ի վերայ ամենայն ազգաց՝ որք ապախտ արարին զբանս նորա, քակել՝ և կործանել զզօրութիւնս նոցա [2]: Իսկ ոմանք հակառակ այսմ կարծեն՝ Նաբուգոդոնոսոր լինել այն, որ ի վերջ Տուբիթայ պատմութեանն գրի. և ասեն զայլ Հողոփեռնէս ի վերայ Հրէաստանի ի ժամանակս Մանասէի արքայի Յուդայ: Բայց սուտ է կարծիքս այս՝ քանզի ի չորրորդ գլուխն Յուդիթայ ասի, ընդ այն ժամանակս էին դարձեալ ի գերութենէ անտի (իւրեանց). և իբրև (նորք էին) ժողովեալք [էին արք] ի հրէաստան [եայք], և (զ)սեղանն Տեառն Աստուծոյ (իւրեանց), և (զ)սպաս(ս)[ք]ն և (զ)տունն ի պղծութենէ անտի զեռ եւ էր սրբեալ [3]:

Արդ՝ և զայս ի Նարդեանս գիտել մեզ ճահ է՝ և յոյժ վայելուչ եթէ քանի Նաբուգոդոնոսորք յիշին ի սուրբ գիրս. քանզի զորմէ բազումք և զանազանեն կարծիք, ուստի յայսմ տեղւոջս հարկ է մեզ զստոյգն հետազօտել: Եւ թէպէտ ոմանք երկս ասեն գոլ Նաբուգոդոնոսոր, սակայն այլատարազ կերպիւ: Վասն զի ասեն թէ՝ առաջին Նաբուգոդոնոսորն է որդի Ասորդանայ՝ որդւոյ Սենեքարիմայ արքայի Ասորեստանեայց. և զորմէ

1) Յուդիթ. Գլ. Ա.
2) Յուդիթ. Գլ. Ա—5.
3) Յուդիթ. Գլ. Դ—2.

հաստատեն թէ՝ նա մարտ ընդ Արփաքսադայ արքայի Մարաց և յաղթեաց նմա և թագաւորեաց ի Նինուէի մեծի քաղաքի։ Երկրորդ Նաբուգոդոնոսոր գոլ ասեն հայր մեծին Նաբուգոդոնոսորայ արքայի Բաբելացւոց, որ այլով անուամբ՝ կոչի Նաբուպօլասար, և ասեն թէ՝ սա միաբանեալ ընդ Ասուերոսի[1]) արքայի Մարաց՝ կործանեաց զՆինուէ։ Իսկ երրորդ Նաբուգոդոնոսոր ասեն լեալ որդի Նաբուպօլասարայ, որ մարտեաւ ընդ Նեքաւովայ արքայի Եգիպտացւոց, և յաղթեաց նմա. և յետոյ գերեաց զՀրէաստան ի Բաբիլոն, և այրեաց զգեղեցկաշէն Տաճարն Տեառն զշինեալն և զկերտեալն ի Սողոմոնէ։ Որ և մականուամբ սա կոչեցաւ մեծ. և վասն հպարտութեանն պատուհասեցաւ յԱստուծոյ, և փոխեցաւ ի կերպ գազանի ամս եօթն կամ ըստ ոմանց ամիսս եօթն[2]), և ապա դարձաւ յառաջին կերպարանս իւր ի ձեռն ողորմութեան՝ ըստ խրատու Դանիէլի մարգարէի[3])։ Բայց գրեթէ՝ չէ ընդունելի մեզ զայս, այլոց որպէս հաճոյ թուիցի կամաց իւրեանց. քանզի մեք զոչ ոք բռնադատեմք առ ի հետևել ստուգագոյն դիտման մերում։ Եւ արդ՝ թէպէտ ըստ ճշգրիտ կարծեաց, և ըստ ճշմարիտ դիտման և այլ երեք անուանքն ի սուրբ գիրս Նաբուգոդոնոսորք, այլ ոչ համաձայն և զուգակցորդ նախկին կարծեացն, այլ այլիմն կերպիւ՝ որպէս կամէ մեզ ի յառաջիկայս ուսանիլ։ Քանզի նախկին Նաբուգոդոնոսոր է մարովդակ բաղադան հայր Ասուերոսի, որ սպան զԱսորդան որդի Սենեքարիմայ, և իսպառ եբարձ

1) Տովբիթի գրքի մէջ (ԺԴ—17) Ասուերոս գրուած է Նաբուքոդոնոսորից անմիջապէս յետոյ եւ միասին մի անուն են կազմում։


2) Սուրբ գրքի մէջ գրուած է եօթն ժամանակ (Դանիէլ Դ—29)։

3) Դանիէլ Դ. 29—34։

զանէրուԹիւն Ասորեստանեայց ի Նինուէ քաղաքէ. ըստ որում և զորոյ կանխաւ իսկ գրեցաք ի յառաջին պրակն։ Եւ յետ որոյ ոչ զոք գտանեմք Թագաւորեալ ի վերայ Ասորեստանեայց ի Նինուէ. զորմէ և ի վերջն Տուբիթայ գրի։ Երկրորդ՝ մեծն Նաբուգոդոնոսոր՝ որդին Նաբուպօլասարայ, որդւոյ Ասուերոսի, և որդւոյ մարովդակ բալադայ, սա գերեաց զԵրուսաղէմ, և զայլն որպէս ի վեր անդր համառօտ ճառեցաք։ Եւ երրորդ՝ Նաբուգոդոնոսոր՝ է Արսէան Կամբիւսէս՝ որդին Կիւրոսի արքայի պարսից. սա պատերազմեցաւ ընդ Արփաքսադայ, և յաղԹեաց նմա. և սա առաքեաց Հողոփեռնէս զօրավարն ի վերայ ամենայն ազգաց, որ և գնաց ի վերայ Հրէաստանի ի ժամանակս որոյ. առ որով էր ՅուդիԹ դուստր Մերարեայ, որ յետ մահուան Մանասէի առն իւրոյ մնաց այրի, և ապա զօրուԹեամբ Տեառն Աստուծոյ էհատ զգլուխն Հողեփեռնեայ 1) և ազրեցոյց զԲետուլուայ, և զամենայն Հրէաստան։ Իսկ Ասուերոս՝ է արքայ Բաբելացւոց և որդի Մարովդակայ, և ոչ է արքայ Մարաց և կամ Ատախաքէս։ Քանզի Ատախաքէս է ինքն Աժդահակ, որ յաւուրս Կիւրոսի՝ Տիգրան քաջահզօր արքայն մեր աջակցեալ ընդ Կիւրոսի սպան զԱժդահակ, այսինքն՝ զԱտախաքէս։ Որ և ի մեր գրի՝ Դանիէլ (Թ—1) Արշաւր, իսկ յայլ ուրեք յայտնապէս գրի Թէ՝ Թագաւորն Ատախաքէս յաւելու առ հարս իւր՝ և էառ Կիւրոս պարսիկ զԹագաւորուԹիւն նորա։

Եւ արդ՝ հակիրճիւ ուսեալ հանդերձ Աստուծով մեր զայսոսիկ՝ և Թէպէտ բազում ընդդիմահարուԹիւնս ունիմք առ ի հաստատել զվերոյգրեալ Նաբուգոդոնոսորքս, այլ այժմ ոչ է ժամանակ երկարաձգելոյ, իսկ եԹէ Տէր կամեսցի յայլում տեղւոջ՝ և ի դէպ ժամանակի ի վերայ այսր

1) Յուդիթ. Գլ. ԺԳ—11։



այսինքն արս՝ տասն և եօթն հարիւր հազար. և խաղաց առ ի տալ ռազմ ընդ հելլադայ զօրուն։ Եւ եղև իբրև ետես զբազմութիւն զօրաց իւրոց՝ ի բարձրադիտակ տեղարանէ, սկսաւ լալ, և ասել. ապաքէն յետ ամաց հարիւրոց անցանելոյ՝ ոչ մնասցէ ի սոցանէ և ոչ մի։

Այլ որ զծովն Հելլեսպոնդական, որ կոչի և Նեղուց Կալիպօլեայ, որոյ տաճկերէն Կելիպօլու պօղազը ասեն. որ է նեղ ծովակ ինչ ի մէջ յունաց ծովուն՝ և պրոպոնտոսի, որ է Մարմարա, տարածեալ յերկայն պարանոցաձև իբրև վտաւանս եօթն, և բաժանէ զԱսիայ ի Թրակիոյ. այսինքն՝ ի Հոռոմաստանայ։ Լցեալ էր յերեսս սորա նաւօք. բայց ի չորս հազար արանց և եթ ի պարտութիւն մատնեցաւ առ Թերմոպիւղացւովք Թողլով նոցա զգանձս և զկարասիս, և միայն կենդանի փախուցեալ մակուկաւ մազապուր սակաւուք անկաւ ի Պարս (Խորեն. 2. 12 պրակ.) և սա թագաւորեաց ընդ ամենայն ամս՝ 19։

Ե. Իսկ զկնի սորա թագաւորէ Արտաւանն՝ ամիսս ՌԼԵ.
եօթն։

Զ. Եւ ապա թագաւորէ Արտաշէս Թոռն Դարեհի։
Որոյ յեօթներորդի ամի թագաւորութեանն՝ ելեալ Եզրաս ՌԼԶ.
դպիր օրինացն Մովսէսի ի Բաբիլոնէ հանդերձ ժողովրդեամբք եկաւ յԵրուսաղէմ։ Ա. յեզր. 8.

Եւ ի քսաներորդի ամի թագաւորութեան նորա՝ Նէեմիաս, որ է Աթարսաթայ, էառ ի նմանէ հրաման՝ շինել զպարիսպն Երուսաղէմի։ Գ. Եզր. 1. 12։ Սա մականուամբ կոչեցաւ երկայնաձեռն[1]). զի ի ծնանելն ունէր

---

1) Կոչւում էր նաև Բահման կամ Արդաշիրն Դրազդաստ. Բահ-ման Սանսկրիտերէն նշանակում է Բազկունիս. իսկ Արդաշիր նշանակում է Աւրդաւ-շիր=Առիւծ բանակի. Անգղիացի Սըջան Մալքօլմի մեկնութեամբ նշանակում է Առիւծ երկրի. Արդ նշանակում է երկիր. Շիր=Առիւծ. Ըստ Յովսէփոսի Ար-

յայտ իսկ է ի գիրս Նաթերայ։ Եւ սա ընդ բովանդակ թագաւորեաց՝ ամս 40։

Ժ. Արդ՝ Արտաշէս Ոքոս յետ նորա թագաւորէ ՐՃԼԶ. ամս 26[1]։

ԺԱ. Արշէզ Բագուաս՝ զկնի որոյ թագաւորեաց ՐՃԿԲ. ընդ ամենայն ամս 4.

ԺԲ. Յետ որոց Դարեհ Կոդմոս թագաւորէ.[2] ՐՃԿԶ. սա ընդ վզեալ ընդդիմանայ Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ամս վեց, և ապա յամի վեցերորդի թագաւորութեանն Աղէքսանդրի՝ յորմէ ի պարտութիւն մատնի, և մեռանի ի նմանէ. թագաւորեալ սա ընդ ամենայն ամս 6։

Զկնի որոյ բառնի թագաւորութիւնն պարսից ի ձեռն մեծին Աղէքսանդրի։ Արդ՝ ահաւասիկ սկսեալ ի Կիւրոսէ առաջնոյ արքայէ՝ մինչև ի Դարեհ Կոդմոս, գումարեալ լինի զթուական ժամանակաց սոցա իբր ամս ՄԼԲ[3]. որ ունեաց զտէրութիւն որոց։ Յետ որոց՝ տիրեցին Արշակունիք, որպէս և վաղ ուրեմն իսկ բացայայտեցաք. արդ ժամէ մեզ ի բաց թողուլ զայսոսիկ, և խօսիլ զնոցանէ հակիրճիւ։ Շատ լիցի աստանօր զոր ասացաք յորոց։

---

1) Մ. Թաղիադեանցի պատմութեան մէջ (էջ 34) Դարաը կամ Դարեհ առաջինից յետոյ թագաւորում է Դարեհ երկրորդը. որին Յոյները Կոդոմանոս են կոչում, իսկ սորանից յետոյ Արտաշէս Օքոս եւ ոչ Ոքոս։ Սա է Արտաքսերքսես Գ-ը (361–338)։

2) Դարեհ Գ. Կոդոմանոս (336–330)։ Աղէքս. Մակեդոնացին սորան յաղթելուց յետոյ՝ իւր իշխանութեան ներքոյ առաւ ամբողջ Աքիմենեան հարստութիւնը։

3) Իսկ ճշգրիտ հաշուով պէտք է լինի 228 տարի. հաշուելով Կիւրոսի թագաւոր. սկզբից՝ 558 թ. մինչեւ Դարեհ Գ. Կոդոմանոսի մահուան տարին՝ 330 թ.

ԳՐԱԿ ՉՈՐՐՈՐԴ

Վասն տոհմին Արշակունեաց. նաեւ առեալ ի յԱրշակայ քաջէ՝ մինչեւ ցԱրտաւան՝ որ սպանաւ ի յԱրտաշիրէ որդւոյ Սասանայ։

ՐՄԾ. *Եւ յետ եօթանասներորդի և երկրորդի ամաց մահուանն Աղէքսանդրի, որ է ամ վաթսներորդ ի Թուոյ Ասորոց, սկսեալ ի Սելեւկեա Նիկանովրէ՝ մինչեւ ի մետասաներորդ ամն Անտիոքոս Տեոսի.*[1]) *զօրմէ և հաւաստեաւ խոկ ճառէ՝ երջանիկ և գերահրաշ Եւսեբիոսին։*

ՐՄԾՕ. *Ա. Ապստամբին պարթեւք ի Թուոյն Ադամայ՝ որպէս և ի վերն եղաք, ի ծառայութենէ Մակեդոնացւոց. և թագաւորէ Արշակ քաջ ի քետուրական ծննդոցն Աբրահամու, որոյ տիրապետեալ պարսից և կողմանցն Ասիացւոց, ամս՝ 31։*

ՐՄՁԱ. *Բ. Եւ ապա Արտաշէս որդի նորա թագաւորէ ամս՝* 46։[2])

ՐՅԻԷ. *Գ. Յետ որդի նորա՝ Արշակ որ կոչեցաւ մեծ, որ զԱնտիոքոսն սպան և զՎաղարշակ զեղբայր իւր՝ թագաւոր Հայոց կացոյց՝ երկրորդ իւր առնելով. և ինքն*

---

1) Անտիոքոս Թէոս. Խոր. Բ. գիրք Գլ. Ա.

2) Ըստ Խորենի. (Բ. Գիրք Գլ. Բ.) թագաւորում է 26 տարի.

չուեաց ի Բահլ,[1]) հաստատեաց զթագաւորութիւն իւր։ Վասն որոյ զարմք նորա պահլաւիկք կոչեցան. որպէս և եղբօր նորա Վաղարշակայ ի նախնւոյն անուն՝ Արշակունիք։ Եւ սա տիրէ երրորդ մասին աշխարհիս, որում Ասիայ ասեն։ Եւ սա է՝ ի զաւակէ Աբրահամու ի քետուրական ծննդոցն, զոր յետ մահուանն Սառրայի առ իւր կին. առ ի հաստատել բանին Տեառն առ Աբրահամ թէ՝ թագաւորք ազգաց ի քէն ելցեն։ Եւ սա ըստ ասուցելոյ ոմանց թագաւորէ ընդ ամենայն ամս՝ 70։[2]) Քանզի ասեն թէ՝ ի յիսներորդի և ցեօթներորդի ամի տէրութեան իւրոյ՝ թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վաղարշակ ի վերայ Հայաստանեայց.[3]) և զկնի անցանելոյ երեքտասաներորդ ամի Վաղարշակայ թագաւորի Հայոց, առնու զթագաւորութիւնն Արշական՝ որդին Արշակայ մեծի, որ ժողովեալ լինի ամս 70։ Տես ի Խորն. 2. և պրակ 65։

Դ. Ապա յետ մեծին Արշակայ՝ տիրէ Արշական ՐՑԴ.Է.
որդի նորա ամս՝ 30։[4])

Ե. Զկնի որոց՝ թագաւորէ Արշակ ի վերայ Պար- ՐՆԻԷ.
սից, ամս՝ 31.[5])

---

1) Բահլ Ահաւատին—Խոր. Բ. գիրք Բ. Գլ. իսկ Մխիթար Անեցւոյ պատմութեան մէջ (պեր. 79 էջ 20) յիշուածէ Բալխ Ահաւատին։

2) Նոյնպէս ըստ Մխ. Անեցւոյ (էջ 21) թագաւորում է ԾԳ. տարի. իսկ ըստ Սեբէոսի Հ. տ. (էջ 9. պեր.)

3) Ըստ Մխիթար Անեցւոյ (էջ 20) Արշակը Վաղարշակին Հայաստանի վրայ թագաւոր է կարգում իւր թագաւորութեան ԽԱ. տարում

4) Սեբէոսի պատմ. մէջ Արշականի փոխարէն յիշուած է Աշնաշ ամս ԼԲ եւ ոչ Լ (էջ 9. պեր.) իսկ Մ. Անեցւոյ հետ համաձայն է։

5) Սեբէոսն Աշնաշից յետոյ դնում է Արշէն՝ ամս ԽԲ. իսկ Մ. Անեցւոյ պատմ. մէջ (էջ 21 պեր. 79. թ.) յիշւում է Արշանակ, որ թագաւորում է ԼԱ տարի։

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Գրիգոր երանելի լուսաւորիչն մեր՝ ի Սուրէնեան Պալհաւէ բողբոջեալ։ Եւ ի քսան և մի երրորդի ամի թագաւորութեան սորա՝ ծնանի ի մէջ գիշերի ի հանգիստ ժամանակի Յիսուս բարերար Փրկիչն մեր, ի Բեդղայէմ Յուդայ՝ ի տանն Եփրաթայ՝ և ի դաշտս մարեաց։ Որոյ փրկողին զմեզ՝ մինչ ձօնեսցի փառք պատիւ և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Եւ սա թագաւորէ ընդ ամենայն ամս՝ 46։[1])

Ը. Յետ Արշօրի՝ որպէս ասացաք թագաւորէ յամի Տեառն ԻԶ, Արտաշէս որդի նորա. սա թագաւորեալ բովանդակ ամս 33.[2])

Թ. Զկնի որոյ թագաւորէ Դարեհ յամի Տեառն՝ ԾԹ որ և սա թագաւորեալ ընդ ամենայն ամս 30։

Ժ. Եւ ապա միապետեալ տիրէ ՁԹ թ. ընդ ամենայն գաւառացս պարսից՝ Արշակ ամս՝ 19։[3])

ԺԱ. Իսկ զկնի նորա թագաւորէ Արտաշէս ՃԸ թ. և սա կալեալ զտէրութիւնն պարսից՝ ամս 20։[4])

ԺԲ. Եւ յետ որոյ տիրապետէ զպարս Պերոզ ՃԻԸ թ. որև թագաւորեալ ամս՝ 33։[5])

ԺԳ. Եւ ապա թագաւորէ Վաղարշ [6]) յամի Տեառն ՃԿԱ և սա ընդ բովանդակ թագաւորեալ ամս 50։

---

1) Այս Լ-րդ հատուածն առնուած է ամբողջապէս Խորենացու Բ. գրքի ԻԸ—դ գլխից, ինչպէս եւ առ հասարակ շատ կտորներ. իսկ Արշակի թագաւորութեան ժամանակամիջոցը Սեբէոսը յիշատակում է ԽԷ տարի (էջ 9)։

2) Թէ ըստ Սեբէոսի (էջ 9) եւ թէ ըստ Մ. Անեցւոյ (էջ 21) Արտաշէսը թագաւորում է 34 տարի։

3) Ըստ Սեբէոսի (էջ 9) թագաւորում է 17 տարի։

4) Սեբէոսը (էջ 10) Արտաշէսի տեղ յիշատակում է Արտաշիր, որ թագաւորում է 46 տարի։

5) Սեբէոսը Պերոզի թագաւորութեան ժամանակամիջոցը յիշատակում է 46 տարի (էջ 10) իսկ Մ. Անեցին 34 տարի։

6) Սեբէոսը գնում է Վաղարշակ. (էջ 10)։

ԻԲ. Ապա Զարմանդուխտ քոյր նորա։ [1])

ԻԳ. Ապա Շահրուբի։

ԻԴ. Ապա Դարուբան։

ԻԵ. Ապա Խոսրով ոմն յազգէ Սասանայ։

ԻԶ. Ապա Պերոզ։

ԻԷ. Ապա Զրուանդուխտ։

ԻԸ. Ապա Յորմիզդ երրորդ՝ [2]) որք և սոքա մի զկնի միոյ յոյժ նիազս տիրեցին ամս՝ 2։

ՋԳ· / ՌԼԴ· ԻԹ. Եւ ապա Թագաւորէ Յազկերտ երրորդ [3]), որ սպանաւ ի Հագարացւոց, և սպառապուռ կործանեցաւ զգրոհ և զցեղ տանն սասանեանց, և սա թագաւորեալ
ՋԸ· / ՌԼԸ· ընդ ամենայն ամս՝ 5. Թէպէտ և ոմանք աւելի քան զայս գրեն և այլատարազ իմն կերպիւ չարաբարդեալ յօրինեն։ Արդ՝ սկսեալ ի յԱրտաշրէ որդւոյ Սասանայ՝ մինչև ցսպանումն Յազկերտի ի սարակինացւոց, ժողովին բովանդակ ամք ԳԾՂԶ [4]), Թէև այլք ոմանք նիազ, և ոմանք յաւէտ ի պատմագրաց քան զայս գրեն և ամենայն իրօք Թէպէտ համաձայնեն ամենքեան՝ միայն Թէ՝ ուր ուրեք տարաձայն ի միմեանց գտանին, սակայն ի Թուականս ժամանակաց այլաշաւիղ ամենքեան՝ և անմիաբան երևին միմեանց, որպէս և զորմէ յայտ իսկ ի վսեմապերճ գիտնոցէ։

Յետ որոյ տիրեցին Հագարացիք ի վերայ պարսից, որ դոյզն ինչ ամօք յառաջ քան զմահն Խոսրովայ երևեցաւ Մահմէտ որդի Աբդլայի, ազգաւ արա–

1) Նէօլդ. յիշատակում է Ազարմիդուխտ. որն էր Բօրի քոյրը. (էջ. 33)։ Իսկ Սեբէոսը (էջ 99) Բօրից յետոյ դնում է. Խոսրով ոմն յազգէ Սասանայ։

2) Ըստ Նէօլդէքէի սա պէտքէ լինի Հորմիզդ կամ Որմիզդ Ե. (տես պատմ. Սասան. էջ 96)։

3) Յազկերտ Գ. 632—651։

4) Տես գրքիս 24-րդ երեսի մէր 4-րդ ծանօթութիւնը։

բացի ի Մէքքայ քաղաքէ արաբացւոց. յամս Հերակլի կայսեր յունաց, և յաւուրս Եզրի կաթուղիկոսի Հայոց։ Որոյ զհետ գնացին նախ սարակինացիք և Հագարացիք, որք են Իսմայէլացիք։ Եւ ապա յորժամ ես առաւել զօրացաւ իշխանութիւն նոցա և յաղթեցին պարսից՝ և ապա զկնի նոցա անկան պարսիկք, և թուրքաց ազգն, և բարբարոսք, և սկիւթացիք, և այլք բազումք՝ որք ամենեքեան առհասարակ այժմ կոչին մահմետականք, զի են հետևողք մոլար՝ և անաստուած Աստուածածանօթութեան նորա և չամչեալ և մոլեգնեալ բարուց նորա։ Արդ՝ Ղևոնդ պատմագիրն գրէ թէ՝ Մահմետ քըսան ամ կալեալ զիշխանութիւնն մեռանի։ Իսկ Ստեփաննոս Տարօնեցին գրէ ի ճառագրութեան իւրում թէ՝ Մահմետ յետ երկու ամի իշխանութեան իւրում մեռանի։ Բայց Մովսէս որ զպատմութիւնս աղուանից գրէ ի յերրորդ հատուածն՝ և ի յառաջին պրակն գրէ թէ՝ կալեալ Մահմետ զիշխանութիւնն ամս ինն՝ ի տասներորդ ամին մեռանի ի Մէքքայ քաղաքի, որ է Քապպէ։

Յետ այնորիկ փոխանորդէ զիշխանութիւնն Մահմէտի Աբուբաքր, և սա կեցեալ ամս Բ, և ամիս եօթն մեռանի։ Յետ այսորիկ կալնու զիշխանութիւն նորա Օմարն առաջին՝ որդի Աթարայ, յամս երկոտասան։ Սա հալածեաց զյոյնս՝ և տիրեաց Հրէաստանի, Եգիպտոսի և Ասորւոց. և էարկ ընդ հարկօք զամենեսեան։ Եւ սա գումարեալ բազմութիւն զօրացն՝ և գայ հասանէ ի վերայ լքեալ թագաւորութեանն պարսից՝ ի վերայ Յազկերտի՝ որ թոռն Խոսրովու, որում ոչ կարէր զդէմ ունել՝ հարկանէին զզօրս նորա կոտորմամբ սրոյ, և զթագաւորն Յազկերտ հարեալ սատակէին։ Եւ գան յարևելս՝ ի Սագաստան, ի Մարս, ի Պարս, ի Սինդ, ի Մըարան, ի Դարան և ի Մակուրան, և յաշխարհն Հնդկաց բառնալ զամենայն թագաւորութիւնս ազգաց։ Եւ յայ-

ԻԲ. Ապա Զարմանդուխտ քոյր նորա[1])

ԻԳ. Ապա Շահրուբի.

ԻԴ. Ապա Դարուբան:

ԻԵ. Ապա Խոռոմ ոմն յազգէ Սասանայ:

ԻԶ. Ապա Պերոզ.

ԻԷ. Ապա Զրուանդուխտ:

ԻԸ. Ապա Ցորմիզդ երրորդ՝[2]) որք և սոքա մի զկնի միոյ յայժ նիազս տիրեցին ամս՝ 2.

